

Հարգելի ուսուցիչներ

Ժողովուրդը դարեր ի վեր իր հոգևոր մեծին շնորհել է ուսուցիչ կոչումը, սրի հերոսների կողքին թագադրել է իր գրչի հերոսներին ու այս կերպ պահել լույսը՝ հոգու սերը:

Ուսուցչի տոնը սոսկ մասնագիտական տոն չէ, կամ էլ ուսուցչին ևս մեկ անգամ մեծարելու պատրվակ: Այն մեր հոգևոր-մշակութային տոներից ամենանշանակալիցներից է, իսկ ուսուցիչ կոչումը մեծարանք է՝ դժվարին առաքելություն:

Մեր նոր պետականության կառուցման այս փուլին բնորոշ ամբողջ դժվարություններն իր վրա կրող ուսուցիչը մի նոր ոգևորությամբ սկսեց նոր ուսումնական տարին, սկսեց ուսման, դպրության, դպրոցի նկատմամբ չմարող սիրով:

Ուրեմն եկեք տարվա բոլոր օրերից տարբերակենք այս գեղեցիկ օրը՝ Ուսուցչի տոնը, տարբերակենք միմյանց սիրելու, գնահատելու, մեծարելու և ոգեպնդելու պարզ ցանկությամբ:

Ձեր տաք ձեռքերում են և՛ մեր անցյալը, և՛ այս օրը, և՛ մեր ապագան:

Բոլորիդ տոկունության, կամքի, հավատի բազմապատկում եմ մաղթում՝ ձեր ազգանվեր, շատ կարևոր և անգնահատելի աշխատանքում:

Տոնդ շնորհավոր, սիրելի՛ ուսուցիչ: